ԵՐԵՎԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ

ՊԱՏԱՍԽԱՆԱՏԻՊՈՒՄ

ՂՈՒԿԱՍ ՍԵԲԱՍՏԻՑԻ

Fs 69.3/26
Ա-33



ԴԱՎԻԹ ԲԵԿԻ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ԱՃԽԱՐՀԱԲԱՐ
ՎԵՐԱՊԱՏԱՄԵՑ
ԱՐՁԱԿ ՄԱԴՈՅԱՆԸ

ԽՄԲԱԳՐԵՑ
ՀԵՆՐԻԿ ՄԱՄՅԱՆ

Գրադարան գ. գործակ.
կալ. ամեն
Կենտրոնացված համակարգի

ԳՄԴ 63.3(2Հ)43
Ս 331

Խմբագիր՝ **ԳԵՎՈՐԳ ԴԵՎՐԻԿՅԱՆ**

Սեբաստացի Ղ.

Ս 331 Դավիթ-բեկի պատմությունը: /Դպր. բարձր տարիքի համար/ Ղ. Սեբաստացի: Աշխարհաբար վերապատմեց Ա. Մադոյանը: Նկ.՝ Հ. Մամյան; Երևան, Արևիկ, 1988, 44 էջ. Նկ.

Ղ. Սեբաստացու մատյանը 18-րդ դարի հայ ազատագրական շարժումների պատմության նշանավոր էջերից է: Լինելով դեպքերի ժամանակակիցը՝ հեղինակը տպավորիչ գույներով նկարագրում է Սյունյաց աշխարհում ծավալված հերոսամարտերը օտար զավթիչների դեմ:

Ս $\frac{4802010000\ (65)}{707\ (01)\ 88}$ — 18 — 88

ԳՄԴ 63.3(2Հ) 43

ISBN 5 — 8077 — 0058 — 9

© «Արևիկ» հրատարակչություն, 1988

Գրադարանի շրջ. գ. № 2

Սրկոր Սոաբ







2. Դավիթ-բեկի պատմությունը

1375 թ. Կիլիկիայի Հայոց թագավորության անկումով հայ ժողովուրդը զրկվեց պետականությունից: Նրա բուն հայրենիքը ենթարկվում էր ասպատակության, ավերածությունների: Ծանր էր ժողովրդի թե քաղաքական, թե տնտեսական վիճակը: Սկսվել էր ազատագրական երազանքի ու ոգորումների տևական մի շրջան, երբ այս ու այնտեղ մարդկանց ջերմացնում էր անթեղված կրակը, հույսի ինչ-որ անշան բռնկում էր երևում, ապա վերստին տիրում էր խավարը: Ճիշտ է, Սասունում, Զեյթունում, Արցախում և այլուր ավատական մանր տիրույթները պահպանում էին իրենց հարաբերական անկախությունը. բայց դա ձեռք էր բերվում գրեթե մշտական կռիվների միջոցով, մի բան, որ արյունաքամ էր անում ժողովրդին:

Ժամանակի առաջավոր հայ գործիչները հայրենիքի ազատագրության ուղիներ էին որոնում մերթ հեռավոր Արևմուտքում, մերթ մերձակա Հյուսիսում և մերթ հանգում այն համոզման, որ սեփական բազկի զորությամբ միայն կարելի է ձեռք բերել բաղձալի ազատությունը:

Հայ ազատագրական պայքարը 18-րդ դարի սկզբին թևակոխեց շատ վճռական մի փուլ, և Ռուսաստանի աջակցության հեռանկարով ոգեշնչվում էին հայ մարտիկները, գրելով անձնուրաց պայքարի տարեգրության անմոռաց էջեր:

Միանգամայն ճիշտ է նկատված, որ 18-րդ դ. առաջին կեսի հայ իրականության ամենանշանավոր դեմքերը հետևյալ երեք գործիչներն են. Իսրայել Օրի, Դավիթ-բեկ և Մխիթար Սեբաստացի: **Եվ եթե նրանցից Դավիթ-բեկը գրեց հայ ազատագրական շարժումների պատմության փառահեղ էջերից մեկը, ապա Մխիթար Սեբաստացու սանը՝ Ղուկաս Սեբաստացին էր, որ 1736 — 1737 թթ. պատմագրեց Սյունյաց աշխարհում ծավալված հերոսամարտերը, փրկելով մոռացումից և դարձնելով հաջորդ սերունդների սեփականությունը:**

Ղուկաս Ստեփանոսյան Սեբաստացին (1709 — 1752) մեկն էր Վենետիկի Մխիթարյաններից, որոնց կյանքն անցնում էր ամենօրյա գիտական պարապմունքներով: Նրա երկերից մասնավոր հետաքրքրություն պիտի ունենա «Համառոտ պատմութիւն թագաւորացն Հայոց և Աշխարհագրութիւն Հայաստանի և Աշխարհագրական բառարան» ստվար աշխատությունը, որ դեռևս անտիպ է և, դատելով եղած տեղեկություններից, հանրագիտական բնույթի է: Այստեղ, իմիջիայլոց, Ղուկաս Սեբաստացին մեկ անգամ ևս համառոտակի անդրադառնում է Կապանի կամ Սյունիքի ապստամբությանը: Մեզ համար ոչ պակաս կարևոր է, որ նա 1737 թ. կազմել է նաև Դավիթ-բեկի մարտերի քարտեզը[1]:

[1] Ղուկաս Սեբաստացու կյանքն ու գործունեությունը ընդարձակ հանգամանորեն ներկայացված են «Բազմավեպ» հայագիտական մատենաշարի 12-րդ գրքում «Դաւիթ բէկ կամ «Պատմութիւն Ղափանցւոց», Հառաջաբան, բնագիր, խմբագիր օրինակ և ծանօթագրութիւններ. Աշխատասիրեց հ. Սամուէլ Արամեան, Վենետիկ - Ս. Ղազար, 1978, էջ 183-194: Քարտեզը տես 48-49 էջերի միջև, ներդիր:

Ղուկաս Սեբաստացու «Դավիթ-բեկի պատմությունը» 18-րդ դ. հայ ազատագրական շարժումների ամենանշանակալից երևույթներից մեկին է նվիրված և վերաբերում է այդ հարյուրամյակի 20-ական թվականներին, երբ Հայաստանը հեծում էր օտարերկրյա զավթիչների լծի ներքո. նրա արևելյան հատվածը Պարսկաստանի տիրապետության տակ էր, արևմտյանը՝ թուրքական բռնատիրության:

1720թ. աֆղանների ապստամբությունը ցնցեց ամբողջ Իրանը, վերջ տալով Սեֆյան հարստությանը: Օգտվելով պատեհ իրավիճակից, Սյունիքի տանուտերերն ու իշխանները որոշեցին գործնական քայլերի դիմել իրենց վաղեմի ազատագրական ձգտումներն իրականացնելու ուղղությամբ: Սակայն նրանց դեմ մեկից ավելի թշնամիներ կային: Տեղացիներին մեծամեծ վնասներ էին պատճառում Սյունիք թափանցող թրքախոս քոչվոր ցեղերը, պարսկական կողոպտիչ խաներն ու բեկերը, ռազմակալական նկրտումներով ժամանակ առ ժամանակ երկիրն ասպատակող թուրք փաշաները: Սրանք երբեմն աջակցություն էին ստանում մահմեդականություն ընդունած որոշ տեղացի մեծահարուստներից:

1722 թ. ամռանը ռուսական զորքերը Աստրախանից շարժվեցին դեպի հարավ և գրավեցին Կասպից ծովի արևելյան ափերը՝ մինչև Գիլան: Դա նոր հույսեր արթնացրեց Արցախի (Ղարաբաղ), Կապանի և ընդհանրապես արևելահայության շրջանում, նորովի գոտեպնդելով ու ոգևորելով՝ ելնելու օտարերկրյա զավթիչների դեմ:

Հաջորդ տարին արդեն նշանավորվեց Սյունիքում հայկական անկախ իշխանության հաստատումով: Հետագա պայքարը նորանոր հաջողություններ բերեց Դավիթ-բեկին և իր զինակիցներին:

1725 թ. գարնանը օսմանյան բանակի զորամասերը մոտեցան Սիսիանի ու Կապանի բարձունքներին և պարտություն կրեցին: Նրանք մեծ ուժերով պաշարեցին Դավթի ամրոցը՝ Հալիձորը: Յոթնօրյա դիմադրությունից հետո, գիշերով դուրս գալով բերդից, հայ քաջազունները հալածեցին ու հետ շպրտեցին թշնամու գերազանց ուժերը: Պակաս տպավորիչ չէր և Մեղրիի ճակատամարտի վախճանը:

Կապանի ապստամբների համար մեծ օգնություն էին, անշուշտ, Արցախի մելիքների ձեռնարկած ազատագրական կռիվները, որոնք ի վերջո հաջողությամբ պսակվեցին: Արցախի ազատամարտիկները ուշի-ուշով հետևում էին Կապանի կռիվներին, ուրախանում այդ հաջողություններով և օգնության ձեռք մեկնում հարկ եղած դեպքում:

Աննկուն, անընկճելի էին Արցախի և Կապանի հայրենասերները: Հայ ազատագրական մտքի խոշորագույն գործիչներից մեկը՝ Հովսեփ Էմինը, 18-րդ դարի վերջերին խոսելով դարասկզբի ապստամբների մասին, իր ժամանակակիցներին ոգեվորելու համար հիշեցնում էր սյունեցիների օրինակը: «Հովսեփ Էմին. Իր կյանքն ու արկածները» գրքում նա նշում էր, թե լեռնաբնակ հայերը «ազատ էին և իրենց մանկութենեն իսկ զենք կը գործածեին»:

Արցախի և Կապանի իշխանները 17-րդ դ. սկզբներին արդեն կարողանում էին

պաշտպանել իրենց իրավունքները: Եվ հաջորդ դարի երրորդ տասնամյակի սրանց մաքառման արդյունքը եղավ այն, որ 1736 թ. Նադիր շահը հայ մելիքներին, Վրաստանի թագավորի նման, ճանաչեց վալիներ (կուսակալ, նահանգապետ): Մելիքը (իշխան, տեր, թագավոր) հարկատու էր անմիջորեն շահին և ինքն էր երկրամասի ժողովրդի տերն ու առաջնորդը, ինքն էր իրագործում երկրի վարչական, իրավարարական, ինչ-որ չափով՝ նաև օրենսդրական կառավարումը: Մելիքի իշխանությունը ժառանգական էր. հոր մահից հետո մելիք էր դառնում ավագ որդին, իսկ նրա մյուս եղբայրները կոչվում էին բեկ: (Այս հարցերի մասին մանրամասնորեն խոսում է Ռաֆֆին «Խամսայի մելիքությունները» մեծարժեք ուսումնասիրության մեջ):

«Դավիթ-բեկի պատմության» հեղինակը միշտ չէ, որ ցանկալի խորությամբ ու մանրամասնություններով է ավանդում եղելությունները: Իր երկի հենց սկզբում. օրինակ, խոսելով Արցախի ապստամբների մասին, նա գրում է. «Եվ թե ինչպես արիացան սրանք, հարվածեցին, հեռացրին թե՛ լակզիներին, թե՛ պարսիկներին, թե՛ օսմանցիներին, մտադիր չենք գրելու. այլ միայն կպատմենք Կապանի յոթնաբերդ գավառում համախմբված հայերի հետ (կապված) դեպքերը»: Ըստ երևույթին նա հրաժարվում է այն պատճառով, որ տվյալ անցուդարձերի մասին ևս իրեն պատմել են Ստեփանոս Շահումյանը և մյուսները, չլինելով անմիջական մասնակից կամ ականատես: Այսինքն՝ Սեբաստացին ի տարբերություն Կապանի մարտերի, Արցախի կռիվների վերաբերյալ տեղեկություններն ստացած լինելով երկրորդ անձից՝ հարմար չի դատել գրի առնելու: Այդպիսով նրան հայտնի շատ թանկագին տվյալներ մնացել են չարձանագրված և մատնվել մոռացության: Բայց այս փաստը ցույց է տալիս հեղինակի զգուշավորությունն ու պահանջկոտությունը, գիտական բարեխղճությունը:

Հնարավոր է՝ Սեբաստացու սույն աշխատության բոլոր թվականները չէ որ ստույգ են (դրանք պետք է ճշտել այլևայլ աղբյուրների հաղորդումների համադրությամբ), բայց ընդհանուր առմամբ նրա տեղեկությունները հավաստի են: Այսօր գուցե դժվար է ճշտորեն որոշել՝ ապստամբությունը 1721, թե 1722 թ. է սկսվել, կամ Դավիթը մահացել է 1726-ին, թե 1727-ին (առաջինն ավելի հավանական է թվում): Դավիթ-բեկի մահվան թվականը, ի դեպ, Պատմության հրատարակիչ Ս. Արամյանի վկայությամբ, բուն ձեռագրում գրված չի եղել. տեղը բաց էր թողնված և հետագայում, ուրիշների ձեռքով է ավելացվել, գրքի 1871 թվականի հրատարակությունից վերցնելով: Սակայն թվականների ճնշող մեծամասնությունը և դեպքերի հաջորդականությունը համապատասխանում են իրականությանը: Մանր անճշտությունների պատճառն այն է հավանաբար, որ Ղուկաս Սեբաստացին պատմությունը գրի է առել դեպքերից ավելի քան մեկ տասնամյակ անց: Այդ ընթացքում ինչ-որ բաներ անպայման աղոտացել էին մարդկանց հիշողության մեջ, սակայն հիմնականը կար, որովհետև նրան պատմողները ապստամբության անմիջական մասնակիցներն էին, մարդիկ, որոնց դերը բնավ երկրորդական չէր և որոնց մասին խոսք եղավ վերևում (Ստեփանոս Շահումյան, տեր-Ավետիս և ուրիշներ): Սրանցից մեկին՝ Ստեփանոս Շահում-

յանին է վերագրվում ապստամբության նախաձեռնությունը, և այստեղ ևս մեծ է ճշմարտության բաժինը:

Դժբախտաբար կենսագրական տեղեկություններ չկան ապստամբության ղեկավար Դավիթ-բեկի վերաբերյալ: Ղուկաս Սեբաստացու Պատմության և կողմնակի աղբյուրների տվյալների համադրությամբ կարելի է ասել, որ Դավիթը ծնվել է 1672 կամ 1673 թ. Սյունիքում, զինավարժության մեջ հմտացել է վրաց արքունիքում, շուրջ վեց տարի գլխավորել է ապստամբությունը և մահացել 1726 կամ 1727 թ., 54 տարեկան հասակում:

Այսօր մեզ քիչ բան է հայտնի նաև Կապանի ու Արցախի հերոսների տոհմագրությունից: Տեր-Ավետիսի թոռնորդին՝ համաշխարհային հռչակի հասած հայագետ և բյուզանդագետ Նիկողայոս Ադոնցը, ցավով նկատել է. «Դավիթ-բեկի զինակիցները՝ թվով քառասուն, անհայտ են մնացել իրենց ժառանգներով: Բացի մելիք-Փարսադանից, միայն Տաթևի երկու զորավարների սերունդն է ցայժմ հայտնի: Դրանք են՝ Ղիչի և Այտին (Գիչի և Այդին): Գիչունց և Այինունց»: Կարծում ենք, այս տեսակետից անհետաքրքիր չէ «Դավիթ-բեկի պատմությանը» կցված ցանկը (տես):

Դավիթ-բեկի ապստամբությունը շատ նշանակալից երևույթ էր հայ ժողովրդի կյանքում, ուստի բնական էր սպասել լայն արձագանք: Սերունդներն իսկապես անդրադարձել են դրան, աշխատել գրի առնել ու փրկել մոռացումից ապստամբության մասնակիցների, ժամանակակիցների հիշողությունները: Առանձին հետաքրքրություն ունեն այդ դեպքերի արձագանքները հայության ամենալայն զանգվածների մեջ: Շատ հաճախ հարևան կամ հեռավոր գավառների հայերը միմյանց ուրախացնում էին Սյունիքից առած լուրերով, մերթ ցանկալին ևս ներկայացնելով իբրև իրականություն: Այդ լուրերը երբեմն կանխում էին բուն իրադարձությունները, և նրանց հաջորդում՝ ապստամբների հաջողությունները: Այդ տեղեկություններն ու զրույցները ամենից ավելի պերճախոս ցուցադրումն են 18-րդ դ. 20-ական թվականների հայության հուսավառ ու սպասողական վիճակի, տիրող մթնոլորտի անխարդախ հայելին են:

Եթե վերևի քաղվածքում միայն նկատվում է, թե հայերը Դավթին ուզում էին թագավոր կարգել և օծել, ապա այն օրերին գրված բազմաթիվ նամակներում խոսվում էր այդ մասին՝ իբրև արդեն իսկ կատարված իրողություն: 1722 թ. հոկտեմբերի 22-ին Ամասիայից Մխիթար Սեբաստացուն հղած նամակում Թովմա Սեբաստացին գրում էր. «Մոսկոֆը (այսինքն՝ ռուսական բանակը — Ա. Մ.) մեծամեծ բազմությամբ եկել Փարվեզինը նվաճել է: Հայոց իշխանին թագավոր է օծել»: Գրեթե նույնը Մխիթար Սեբաստացուն գրում էր Միքայել վարդապետը 1725 թ. նոյեմբերի 27-ին, Կոստանդնուպոլսից:

Բնավ պատահական չէր, որ Դավթի ապստամբությունը լայն արձագանք գտավ ամբողջ Հայաստանում առհասարակ: Վերոհիշյալ նամակներին համահունչ բազմաթիվ գրություններ են ստացվել Վենետիկում Պոլսից ու Կարինից, Էնկյուրիից ու Ամասիայից, Զմյուռնիայից ու Ախալցխայից: Մխիթար անունով մի աբեղա 16-րդ դարի մի ձե-

ռագրի մեջ 1722 թ. կարևոր գրառում է կատարել Վասա լՃի Լիմ կղզում տեղի ունեցած ժողովի մասին, որի մասնակիցները հավանաբար Վասպուրականի ու շրջակայքի իշխանավորներ էին: Նա վկայում է, որ ռշտունցի «քաջահամբավ և արիասիրտ» վարդապետ Ներսեսը ժողովրդին ներկայացրել է համայն հայության «դառնակսկիծ» վիճակը և ցնծագին տեղեկացրել, թե «Սյունյաց երկրից մի այր՝ Դավիթ-բեկ անվանված, զորաշարժություն է արել՝ մեր նեղիչներին ու կշտամբիչներին հալածելու համար, **մտադրված լինելով ազատագրելու արյունածուփ աշխարհն Հայաստան:** Արդ, ով բարեմիտ ու հայրենապաշտ ժողովականներ, շրջեցեք ձեր երկրի գավառները, խրախուսեցեք ժողովրդին, որ մրափում է խոր խավարի ու տանջանքների մեջ, որպեսզի թոթափեն անիրավների բռնությանց լուծը, և երբ մենք մարտի հրավեր ուղարկենք՝ ապստամբության ձայն բարձրացնեն ընդդեմ մեր մարդակեր ու խաչահալած թշնամիների» («Տեղեկագիր», 1941, №5 — 6, էջ 71 — 72: Ընդգծված տողը ձեռագրում գրված է կարմիր թանաքով):

Սյունիքի ազատագրական շարժումների գրական արձագանքներից ուշագրավ է տեր-Ավետիսին նվիրված ոտանավորը՝ «Ի Սահակէ» բանակապով: Երբ տեր-Ավետիսը ասպարեզից հեռացել էր, շատերը նրա հայրենի գավառից խնդրում էին հերոսին վերադառնալ և շարունակել պայքարը: Սահակ քահանայի ոտանավորը նույնպես սրա արտահայտությունն էր, ուր հիշելով տեր-Ավետիսի որոշ սխրանքներ և դիտելով, թե «ազգն տաճկաց» սարսում է տեր-Ավետիսից, որովհետև հաղթել է նրանց զորքերին, հեղինակը հորդորում է վերադառնալ.

Կրկին խնդրեմք արիանալ,
Պալի պէկին զինուորանալ.
Հայոց ազգին թև ու թիկունք,
Տէր Աւետիս, բարեաւ երթաս: («Դաւիթ-բէկ», էջ 145)

Ժամանակի ամենակուլ երախից, ինչպես տեսնում ենք, քիչ բան է փրկվել ու հասել մեզ, նոր սերունդներին, և այդ քչի մեջ իր ծանրակշիռ բաժինն ունի Ղուկաս Սեբաստացու «Դավիթ-բեկի պատմությունը», որը Սյունիքում ծավալված իրադարձությունների վերաբերյալ գլխավոր սկզբնաղբյուրն է և մեծ պատմաբան Լեոյի գնահատությամբ՝ 18-րդ դարի ամենագեղեցիկ գրական գործերից մեկը: Որոշ ժամանակ անց, 19 — 20-րդ դդ. գրականության ու արվեստի գործիչները բազմիցս անդրադարձել են Սյունիքի ու Արցախի ազատագրական պատերազմներին, և օգտվելով ամենից առաջ Ղուկաս Սեբաստացու արժեքավոր աշխատությունից, ստեղծել են այդ անմահ իրադարձության գեղարվեստական նոր մարմնավորումներ: Հայտնի է Ռաֆֆու «Դավիթ-բեկ» վեպը, որին հաջորդեցին Արմեն Տիգրանյանի համանուն օպերան, վեպեր, կինոնկարներ... Եկող սերունդները նորից ու նորից կանդրադառնան դավիթբեկյան հերոսապատումին, նորովի ու յուրովի կիմաստավորեն նախնիների հայրենաշունչ սխրանքների պատմությունը:

Արշակ Մադոյան

Գլուխ առաջին

Թե ինչու կամ ինչպես եկավ Դավիթ-բեկը Կապանի գավառ, և նրան միացան գավառի բոլոր բնակիչները և ընդդիմացան թուրքերին

Նախ

ԴԻՎԻՐԸ ԵՌԱՅԲԻԼՈՒՐՈՒՄ

հարվածել զարհուրելը-

կոչված թուրքերին, ապա դնում



Դավիթ-բեկի պատմությունը

կամ

ՀԱՅՐԻՆԵՆ ԵՐԱՄԻՀԱՅՐ

բառակեց
Հովհաննես
Շահխաթունյան:

Այն ժամանակ, երբ Հնդկաստանի կողմերում, Ղանդահար գավառում թուրք աֆղանների ազգը զորացավ, և նրանք հարձակվեցին Պարսից երկրի վրա, նույնիսկ եկան, պաշարեցին և գրավեցին Սպահան քաղաքը, սպանեցին պարսից շահ-Հուսեին արքային, տիրոջ 1721-րդ և հայոց թվականության 1170-րդ տարին էր:

Իսկ լակզի թաթարները հյուսիսի կողմից արշավում են Հայաստանի վրա և Գանձակի ու Շամախիի գյուղերն ասպատակելով, կողոպտում և Շամախիի իշխանին, որ Ագուլիսի Միրզաբեկյան տոհմից էր, սպանում, բոլոր զինված դիմադրողներին կոտորում և երկրի ժողովրդին, կանանց ու երեխաներին գերի վարում: Անչափ չարիք տեսան Գուգարքի և Ուտիքի հայերը, ելան նրանց վտարելու, գունդ կազմեցին, պատրաստվեցին մարտի, միահամուռ ճակատ կազմելով Տրտու գետի շուրջը՝ իրենց երկրի վրա հարձակվողների դեմ. բանակատեղին նրանից ստացավ իր անունը և մինչև օրս կոչվում է Մեծ Սղնախ: Եվ թե ինչպես արիացան սրանք, հարվածեցին, հեռացրին թե՛ լակզիներին, թե՛ պարսիկներին, թե՛ օսմանցիներին. այս ամենի մասին մտադիր չենք գրելու, այլ միայն կպատմենք Կապանի յոթնաբերդ գավառում կատարված եղելությունները:

Հայկազյան 1171 թվականին, երբ Կապանի գավառի բնակիչները լսեցին Գանձակի և Շամախիի ասպատակումն ու ավերումը, բոլոր հայերը տագնապած նեղվում էին և մոտ երկու կամ երեք ամիս երկյուղի մեջ էին: Դառնության ու սասանման այս օրերին հայոց ազգից մեկը, Ստեփանոս անունով, Կալերի կողմերից, վանքեցի, նպատակադրվում է անցնել Սիսական գավառը, գնալ հասնել Վրաց աշխարհը, Մցխեթ քաղաքը՝ վրաց իշխանաց իշխան Շահնավազի մոտ և խնդրել նրանից՝ Կապանի երկրին տալ մի մարդ և նրան իրավունք տալ զորք հավաքելու և երկիրը թշնամիներից պաշտպանելու: Որովհետև այս բանը շարքայիններից ոչ ոք չէր համարձակվում անել, և եթե որևէ մեկն աներ, իբրև տերության դեմ ապստամբած՝ կմերժվեր ժողովրդից:



Եվ որպեսզի կարողանա իր խնդրանքը գլուխ բերել, մտածեց Կապանի հիսուն տանուտերերի անունից գրություն հորինել, նրանց կնիքների նմանությամբ կնիքներ պատրաստել և այն գիրը դրանցով կնքել-վավերացնել:

Եվ հրովարտակի բովանդակությունն այս էր. «Մեզ մի մարդ տուր, որ զորապետ լինի, և մենք հոգ տանենք զորք հավաքելու մասին և դրանով մեր հողը թշնամիներից ազատենք»:

Գնաց Ստեփանոսը, հանդիպեց վրաց իշխանին, գուժեց նախահիշյալ քաղաքների ավերման մասին, պատմեց և բոլոր փորձանքներն ու խռովությունները, ահն ու երկյուղը Կապանի ժողովրդի, և նրան հանձնեց հրովարտակը, որ կազմել էր տանուտերերի անունից:

Իշխանին հաճո թվաց խնդրանքը, և կանչելով մցխեթցի հայ Դավիթ-բեկին, նրան իրավունք տվեց գնալու իր հայրենի աշխարհը՝ Կապան, զորք հավաքելու այնտեղ և հայոց հողը պաշտպանելու:

Դավիթը եկավ Սյունյաց աշխարհը հասավ տիրոջ 1722, հայոց 1171 թվականին ու բանակեց Սիսական գավառի սահմաններում, գեղեցիկ դաշտավայրում, Եռագագաթ բլրի մոտ:

Դավիթն ինքը ազնվական էր, բարեպաշտ, արդարակորով, գրագետ, արիասիրտ, լայնախոհ, խոսքով ու գործով ուժեղ, ազգի բարօրության նախանձախնդիր և աննեռող՝ նրա թշնամիների հանդեպ: Իր նման էին և նրա բոլոր հետևորդները: Եվ երբ նա ելավ Վրաց երկրից, նրա շուրջն էին հավաքվում գավառի բոլոր կողմերից զինակիր տղամարդիկ, որ լսում էին նրա մասին. 400 մարդ, որոնք ճնշված ու տառապած էին օտարների դառն ծառայությունից, այրեր, որոնք իրենց նվիրել էին ազատության՝ օտար լծից և որոնցից մեկը հարյուրների էր հալածում, երկուսը՝ հազարների:

Նախ Դավիթը Եռաբլուրում հարվածեց ղարաչոռլու կոչված թուրքերին, ապա գնաց բանակեց Հայրաշեն կամ Շինուհայր կոչվող ամրոցում: Եվ իր մոտ կանչելով Տաթևի առաջնորդին, պատմեց նրան, թե ինչ գործով, ինչ նպատակով է եկել, և ասում է՝ իսպառ ջնջելու ենք բոլոր օտարերկրացիներին: Եվ խմբեց շուրջը Շինուհայրի տղամարդկանց, զարկեց-ասպատակեց թուրքերի գյուղերը և գրավեց նրանց ունեցվածքը:

Այդ տեսնելով, ջրվանշիր կոչված երեսուներկու ցեղերը համախմբված գալիս, հավաքվում, գունդ են կազմում և շարժվում Դավթի վրա: Իսկ նա Եռաբլուրում նրանց ընդառաջ գալով, հեռվից տեսավ թշնամու զորքերը, որ մոտ վաթսուն հազար էին: Հետը վերցնելով չորս հարյուրի չափ ընտիր սպառազեն, հարձակվեց նրանց զորքերի վրա, հերձելով ու կոտորելով:

Ախուրյանի շրջ. գործկոմ

Բայց կռիվը շուտ չավարտվեց, այլ տևեց շուրջ երկու օր: Երրորդ օրվանից հետո իսպառ կոտորեց կամ վտարեց նրանց:

Այնուհետև իր սպարապետ Մխիթարին ուղարկեց Քուրթլար կոչվող ավանը: Սա հարվածեց և ավար առավ նրանց ամբողջ ձիերը, զենքը, սրերը:

Երբ Կապանի բոլոր բնակիչները տեղեկանում էին, թե Դավիթ-բեկը մեծ քաջությամբ եկել օգնության է հասել հայերին, նրա մոտ էին շտապում բոլոր կողմերից: Առաջինը նրա մոտ է դիմում Թորոսը՝ Չավնդուր գավառից, սակավաթիվ մարդկանցով և նրանից զորապետության իշխանություն ստանալով՝ վերադառնում է Չավընդուր՝ իր երկիրը, հետը տանելով նաև Դավթի Պայինտուր զորավարին: Նրա մոտ էին գալիս Գողթան գավառի Ջուղա քաղաքի (որ նաև Հին Ջուղա է կոչվում) Մաղա-մելիքի որդիներն իրենց զորքով, Տիլենչի մականվանյալի որդիները: Սրանք բոլորը, մոտ երկու հազար զորավոր տղամարդ, գալիս, գումարվում են Դավթի զորքերին:

Այս ժամանակ Տաթևում մի մելիք կար ուրացող, որ առաջ կոչվում էր Դավիթ, բայց հետո, երբ հավատը փոխեց, ինքը և ամբողջ ընտանիքը, վերակոչվեց Պաղրի, և նրա որդիները դարձան շահ-ղուլի: Սա երբ լսում է Դավթի գալը, Տաթևի տղամարդկանց հավաքում, ամրություններ է շինում և պատրաստվում է պատերազմել Դավթի դեմ:

Դավիթ-բեկը գալիս հարձակվում է նրա վրա, պաշարում ամրությունները և երկու օր հետո նրան բռնում, տանում է Շինուհայր և հրամայում տասներկու օր եկեղեցում բոլորի ներկայությամբ բարձր ձայնով ասել առածի խոսքը. «Լույս Լուսավորչի հավատին, վայ ուրացողին»: Այնուհետև Դավիթ-բեկը հատում է նրա գլուխը: Ապա սուրհանդակներ է ուղարկում Հալիձոր, տեր-Ավետիսի և նրա աներոջ՝ մելիք-Փարսադանի մոտ, և ասում՝ եկեք միաբանեցեք մեզ հետ, որ վտարենք բոլոր թուրքերին երկրից: Իսկ նրանք չեն գալիս:

Դավթի՝ Կապան գալու երկրորդ տարին, սուրբ Լուսավորչի տոնի քառասնորդաց պահքի օրերին Չավնդուրի վրա հարձակվեց Կապանի կուսակալը՝ Փաթալի սուլտանը, և նրա հետ՝ Սև լեռան խանը, տասնութ հազարով:

Հայոց զորքերը Քրիստոսի հարության տոնին, գիշերով հանկարծակի աղաղակ բարձրացրին, հարձակվեցին, հարվածեցին, կոտորեցին նրանցից շատերին և մնացածներին փախստյան մատնեցին:

Այս հաջողությունից հետո մելիք Փարսադանն ու տեր-Ավետիսը եկան Դավթին ողջունելու: Իսկ նա բարկանալով նրանց վրա, ասում է՝ կանչեցի ձեզ, և ինչու չեկաք օգնության, — և հրամայեց նրանց տանել Շինուհայր և բանտարկել: Եվ նրանք տասներկու օր բանտում մնացին:

Պատահեց, որ Գուգարաց Հովհաննեսը, գալով այն կողմերը հիսունվեց հազար

հայագունդ զորքով, պաշարում է անմատչելի Որոտնա բերդը: Չկարողանալով ազատել թուրքերից, գալիս է Շինուհայր և այնտեղ գտնում տեր-Ավետիսին ու նրա աներոջը կալանքի տակ, ազատում է նրանց և ուղարկում Հալիձոր, Դավիթ-բեկի մոտ, իսկ ինքը գնում է Տաթև ու վերադառնում իր երկիրը:

Իսկ Դավիթ-բեկը մելիք-Փարսադանին կարգում է զորապետ երկու հարյուր վաթսունվեցանոց զորքի և տեր-Ավետիսին՝ չորս հարյուր քառասունանոց:

Եվ մի օր Դավիթը տեղեկացավ, որ Ասլամազ-ղուլին Փուխուրութի լեռան կողմերում, Զևու բերդում զորք է ժողովել, ինքն ևս պատրաստվեց, սուրհանդակներ ուղարկեց Չավնդուր, Կալեր, Կենավուզ և Մեղրի՝ զորավարներին, որ գան հավաքվեն այնտեղ: Եվ սրանք անմիջապես եկան: Թորոս զորավարը կռվի հարցում հակառակվեց նրան, բայց միջնորդներ եղան, որ հաշտեցրին նրանց: Հավաքելով զորականներին, նրանք գնացին Ասլամազ ղուլիի վրա, պաշարեցին Զևու բերդը, բայց դժվար եղավ գրավելը, որովհետև ամրոցը բարձրաբերձ էր և անառիկ: Երկօրյա ընդհարումից հետո Մխիթար սպարապետը և տեր-Ավետիսը վճռական գրոհի դիմեցին: Տեր-Ավետիսը խորամանկությամբ կարողացավ բարձրանալ պարսպի վրա և ձերբակալել գլխավորներին: Եվ պարիսպների շուրջը եղած ամբողջ զորքերը լցվում են պարիսպներից ներս և սրամարտով կոտորում թշնամիներին: Այդ օրը նրանք չորս հազար թուրք կոտորեցին, իսկ իրենցից քչերը մեռան: Հետո Դավիթը շրջվեց, գնաց Սիսական գավառը և այնտեղ կոտորեց թուրք իշխանավորներին:

Իր Կապան գալու երրորդ տարին էր, Դավիթը պաշարեց Որոտնա բերդը, և ծաղկազարդի տոնին, որ ամրոցի պաշարման չորրորդ օրն էր, հորդ անձրև եղավ (ոմ սքանչելիք), և անձրևի սաստկությունից պարսպի մի կողմը ինքնիրեն քանդվեց: Այդ տեսնելով նրանք ձայն տվեցին, խրախույս կարդալով հարձակվեցին, մտան ներս ու կոտորեցին բոլոր օտարերկրացիներին, գրավեցին բերդը:

Եվ այնպես եղավ, որ Դավիթն իր զորքերի մեծ մասը ուղարկեց Պարկուշատի թուրքերի վրա և ինքը քչով մնաց Սիսական գավառում: Նրա դեմ ելավ Նախիջևանի խանը՝ տասնչորս հազարով: Լսելով այդ մասին, Դավիթը շտապ զորահավաք արեց Դարպասից ու Սիսական տնից, գունդ կազմեց և գնաց նրան հասավ Նախիջևան գետի մոտ: Այնտեղ, երբ միմյանց բախվեցին, խանի զորքերը փախուստի դիմեցին, և Դավթի զինվորները հետապնդում էին նրանց օրվա տասնութերորդ ժամից մինչև քսանմեկերորդ ժամը, հալածում էին և նրանցից շատերին դիաթավալ վիրավոր էին դարձնում: Բայց քսաներկուերորդ ժամին բոլոր փախստականները միասին հավաքվեցին և նորից շրջվեցին հայերի դեմ: Վերջիններս, տեսնելով այդ հանդուգն հարձակումը, հուսալքվում էին, կանգնում կամ փախչում դեպի գետը, տագնապից շտապելով մեկը խեղդվում էր գետում, մյուսը սրի ճարակ էր դառնում, որովհետև ետևից

թշնամու սուրն էր, իսկ առջևից՝ հորդացած գետը, և չկար այլ ելք ու ճանապարհ: Ուստի այդտեղ սրանցից ավելի քան հազար մարդ զոհվեց մինչև մութն ընկնելը, և մյուսները փախչելով թաքնվեցին քարերի մեջ, անձավներում ու մացառուտներում: Եվ գիշերվա երկրորդ կեսին Դավիթը եկավ հասավ Սիսական, և բոլոր փախստականները հավաքվեցին նրա մոտ:



ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Թե որքան գործ կատարեց Թորոս զորապետը և թե ինչպիսի պատերազմներ եղան Չավնդուրի և Մեղրիի կողմերը









Այն օրերին, երբ Թորոսը լսում էր Չավնդուրի Խորձորում, թե Դավիթը մեծ զորքով եկել հասել է Սիսական գավառը, իր հետ վերցնում է մոտ երեսուն մարդ և գալիս հասնում նրա մոտ, և նրանից զորապետի իշխանություն ստանալով անմիջապես վերադառնում է, գնում Չավնդուր և տեղի մարդկանց հավաքելով իր մոտ նրանցից գնդեր է կազմում, հարյուրապետներ ու հիսնապետներ նշանակում:

Պատահում է այնպես, որ սուլտանի ոչխարներից մի հոտ, երկու հազար ոչխար, և տասներկու հովիվ, գալիս են Չավնդուրի երկիրը՝ արածելու: Իսկ Թորոսը լսում է այդ մասին, մարդիկ է ուղարկում, որ գնան կոտորեն հովիվներին և ամբողջ հոտը տանեն իր մոտ: Եվ այդպես արեցին:

Համբավը Պարկուշատի Փաթալի կուսակալին ու նրա եղբայր Աղասի խանին հասավ: Եվ Փաթալին այսպես գրեց Մահնիչար-օղլի Սափի-ղուլիին.

«Մեզ հայտնի դարձավ և մենք անձամբ տեղեկացանք, թե ինչու Չավնդուրի հայերը մեր դեմ ապստամբել են, սուր են բարձրացրել տաճիկների դեմ: Ուստի այսինչ օրը տասներկու հազարով ես կհարձակվեմ Չավնդուրի բնակիչների վրա: Դու ևս վերցրու քեզ հետ թուրքաց բոլոր զորավարներին, որ Կենավուզում են, և դու այդտեղից, ես այստեղից գնանք հայերի վրա և մեջտեղից վերացնենք»: Բայց նա հանձն չառավ այդ անել:

Եվ Փաթալին հարձակվեց Չավնդուրի վրա տասներկու հազարով: Իսկ Չավնդուրի բնակիչները, երբ այդ լսեցին, Իշկետից հարյուր հիսուն զինված մարդ ուղարկեցին, որ գնան, բռնեն ճանապարհները, որովհետև շատ անտառախիտ էր: Նրանք եկան այնտեղ դարան մտան: Երբ թուրքերի զորքերն այնտեղ էին հասնում, դարանամուտները ստեպ-ստեպ հրացանները նրանց վրա էին արձակում, և հայոց մյուս զինյալները մարտի դաշտ էին հասնում և նրանցից շատ-շատերին տեղնուտեղը կոտորում, ուրիշներին փախստական դարձնում և հետապնդում մինչև Պարկուշատի կողմերը: Այդ օրը թշնամիներից ընկնում է շուրջ չորս հազար մարդ:

Բայց հաջորդ օրը լևազյան Սափի-ղուլին երեք հարյուր սպառազեն մարդով նենգությամբ գալիս, բանակում է Ափկու վանքում և այնտեղից գրում Իքաց ավանի

իշխաններին, որ նրանք ևս գան, որպեսզի Մանլևը և հայոց այն կողմերի բոլոր գյուղերը կողոպտելով ավերեն: Բայց Միրզա-Սայիլ իշխանն այդ չկամեցավ:

Մանլևի այրերը, իմանալով այս ամենը, մարդիկ ուղարկեցին Չավնդուր՝ Թորոսի մոտ, ասելով. Եկել է Սափի-ղուլին և այսպիսի բաներ է ուզում անել: Երբ այդ լսում է Թորոս զորապետը, անմիջապես զինում-պատրաստում է զորքը և հինգ հարյուր զինակրով դիմում նրանց վրա, առավոտյան ժամը տասներեքին հասնում Ափքիս: Իսկ Սափի-ղուլին այդ տեսնելով փախուստի է դիմում, և Թորոսը հետապնդում է, կոտորում նրանցից ութսուն հոգու: Այնժամ կոտորեցին թուրքերի երեք գյուղ:

Երբ այս լուրը հասնում է Քիս և Իքաց, իքացի բնակիչներից բոլոր տղամարդիկ գալիս, հավաքվում են և իրենց կանանց ու երեխաներին հանում ամրացնում են ավանի դիմացի բարձր գագաթին և իրենք հարձակվում են Մանլևի վրա: Թորոսը նրանց ընդառաջ է գալիս և նրանցից շատերին տեղում ոչնչացնում է, ուրիշներին մինչև Քիս հալածում և հրամայում է զորքերին՝ չհետապնդել նրանց, այլ երթալ, քանդել ու այրել նրանց տները, վերցնել նրանց ամբողջ զենուզարդը և վերադառնալ:

Թորոսը Մանլևում մնաց երեք օր և այնտեղ թողնելով կալերցի Պապին՝ Սրապիոնի որդուն, զորապետ և կառավարիչ Կենավուզի երկրի, ինքը դարձավ գնաց Չավնդուր: Այնուհետև Պապը զորք հավաքելով եկավ բանակեց Կալերում: Բայց Սափի-ղուլին Լազի ձորի թուրքերին գաղթեցրեց Օրդուվար: Մնացին միայն չորս թուրքական գյուղ Արձանաքարի կողմերում: Եվ Պապը հրամայեց գնալ կոտորել դրանց: Եկան հարձակվեցին երեք գյուղի վրա և առան նրանց ինչքը: Թաղամեր ավանում վաթսուն տուն թուրք կար: Դրանք եկան, լաց-աղաղակ բարձրացրին հայոց զորականների առաջ և ասում են. Մենք լիովին հպատակվում ենք ձեզ, և սրանց խնայեցին:

Մոտ մեկ կամ երկու ամիս անցավ, Սափի-ղուլին Օրդուվարից վերցնելով հինգ հարյուր մարդ, մի գիշեր գալիս ավերում է երկու հայկական գյուղ Սայիպունում, տղամարդկանց կոտորում և նրանց կանանց ու երեխաներին գերեվարում Օրդուվար:

Դավիթ-բեկն այդ լսելով կանչում է իր սպարապետ Մխիթարին և հրաման է տալիս գնալ կոտորել թուրքերի վերոհիշյալ վաթսուն տունը Թաղամերում, և հրամանը կատարվում է: Ահա այս ժամանակ Դավիթ-բեկն ավարտում է բերդի կառուցումը Հալիձորում:

Դավիթը հրամայում է Պապ զորավարին գնալ Լազի ձորը, որ եթե թուրքեր կան՝ կոտորե: Պապը հազար հինգ հարյուրով գնում է Լազի ձորը, և թուրք չկար: Պապը գնում է Վայրիվարի կողմերը: Այնտեղ երեք տուն է գտնում, որոնք ուրացել էին քրիստոնեությունը: Դրանց բոլորին կոտորում է և վերադառնում:

Այսպես Դավթի զորականները շրջում էին Կապանի ամբողջ երկրում, հարցնում,

որոնում և որտեղ օտարերկրացի էին գտնում, սրի քաշելով կոտորում էին մինչև բոլորին Կապանից իսպառ բնաջնջելը:

Դավթի՝ Կապան գալու երրորդ տարին Թորոս զորապետը իր բոլոր զորքերի հանդես արեց Չավնդուրում և հավաքեց իր երկրից բոլոր կռվող տղամարդկանց՝ հարձակվելու համար Օրդուվար քաղաքի վրա: Բայց Պարկուշատի գավառի երիցվանիկ ավանի մելիք Ֆռանկուլը այսպես գրեց Թորոսին.

«Հայտնի է դարձել Փաթալի սուլտանին քո մասին, թե զորք ես հավաքում Օրդուվարի վրա հարձակվելու համար: Սա ևս ահա այստեղ է զորք հավաքում, որպեսզի երբ դու երկրիցդ ելնես, անմիջապես հասնելով կործանե քո երկիրը: Ուստի շատ ճիշտ կանես, եթե նախ գաս Պարկուշատի վրա: Որովհետև նաև Պարկուշատի հայերս քեզ աջակից կլինենք»:

Բայց այս ամենը նա ծուռ մտքով, նենգությամբ էր գրում, որպեսզի նրան թշնամու ծուղակը գցեր, կուսակալին ցույց տալու համար իր հավատարմությունը: Եվ Թորոսը հավատաց նրա խոսքերին և ելավ միամտորեն գնաց, հասավ Եղահորդ, որ Պարկուշատի մերձակայքում է, գնաց ու բանակեց այնտեղ: Եվ եկավ Ֆռանկուլը նրա մոտ՝ երկու հազարով և կանգնեց Թորոսի զորքի մի կողմում: Շուտով այնտեղ հասան Փաթալին ու նրա եղբայրը՝ բազում զորքով, Թորոսի բանակից եռակի ավելի: Եվ երբ ճակատեցին իրար դեմ, կուսակալի զորքը փախուստի դիմեց, և Թորոսը նրանց հետապնդեց: Այդ տեսնելով անօրեն Ֆռանկուլը մարդիկ է ուղարկում Փաթալի ետևից և ասում. «Ի՞նչ եք անում, ինչո՞ւ եք փախչում, ետ դարձեք, որովհետև ես ձեզ հետ եմ, դուք առաջից, ու ես ետևից, խորտակենք սրանց»: Այդպես արեցին: Թորոսն այդ կռվում ընկավ: Ահա այսպիսի անօրինություններ գործեց Ֆռանկուլը: Բայց այսքանը քիչ էր, սուլթանին ավելի հաճոյանալու և ցույց տալու համար, որ ինքը Դավթի և կապանցի զորականների համախոհը չէ, ուրացավ նաև հավատը:

Այս ամենը որ այսպես եղավ, Փաթալին մտադրվեց գալ մտնել Չավնդուր, կոտորել ու կորստյան մատնել նրա բնակիչներին: Բայց Նուպար սպարապետը հաջորդեց Թորոսին և երբ լսեց այս բանը, շտապ սուրհանդակ ուղարկեց Պապ զորապետին, ասելով. «Արդեն դու գիտես, որ կորավ մեր զորքը, և հիմա ելել մեզ վրա է գալիս Փաթալին, օգնության հասեք մեզ»: Եվ նա անմիջապես Չավնդուր ուղարկեց երկու հազար զորք՝ օգնելու Նուպարին: Իսկ Փաթալին, տեղեկանալով, որ Նուպարին Կենավուզից օծնության են եկել, դարձավ իր տեղը:

Պապի՝ Չավնդուր եկած զորավարներից երկուսը ապստամբեցին Պապից, իրենց միջև եղած ինչ-որ խռովության պատճառով: Եվ գալով Լիճք ավանը, զորաժողով արեցին և ցանկացան բռնել Պապին, ասելով՝ մենք պիտի կառավարենք երկիրը: Իսկ նա փախավ: Երբ Դավիթ-բեկը լսեց, Գորգի զորապետին երկու հարյուր մարդ-

կանցով ուղարկեց նրանց մոտ, որը և նրանց հաշտեցրեց ու հնազանդեցրեց Պապին:

Սրանից մեկ կամ երկու ամիս անց Օրդուվարից Պապին ուժական հասավ, թե թուրքերը զորք են հավաքում, գալու ավերելու Կապանը: Այնժամ Կենավուզի իշխանավորները միասին եկան, մտածեցին հրաման տալ, գյուղերից բոլոր մարդկանց հավաքել: Այս բանը խորհուրդը հաստատեց, և այդպես արեցին:

Մի քանի օր անց օրդուվարցի Սափի-ղուլին և Շահիսլամի որդին ութ հազարով եկան, անցան Ալանկեզի սարից դեպի Պուղաքար, Դաշտուն, բոլոր գյուղերն ավերեցին: Իսկ գյուղերի ժողովուրդը, որ հավաքված էր մի տեղ, Խաչպոլի սարից անցավ Չավնդուր երկիրը:

Այս ամենը լսելով, Դավիթը զայրացավ պա ւսիկների դեմ և իր հետ վերցնելով երկու հազար ութ հարյուր սպառազեն մարդ, շտապ եկավ Դաշտուն: Թուրքերը լսելով Դավթի գալը՝ փախան Օրդուվար: Երեք օր անց նա գնաց Կեմնայի դաշտավայրը: Երբ լուր հասավ Օրդուվար, թե Դավիթն անցել է Չավնդուր, ելան պատրաստվեցին Սափի-ղուլին, Շահիսլամի որդին և բազմաթիվ զորքով եկան հասան Կենավուզի կողմերը և Ալանկեզի սարերն անցնելով, Կենավուզի բոլոր գյուղերն այրեցին: Լուրը հասավ Դավթին: Նա անմիջապես վերցնելով չորս հազար հոգի, գալիս բանակում է Կալերում: Առավոտյան ավազակ թուրքերի վրա է հարձակվում և նրանց գտնում է Լիճքում, գետի ափին: Իսկ նրանք, երբ տեսան Դավթի զորքերը, հասան բռնեցին գետի ափը և թույլ չէին տալիս Դավթին գետն անցնել: Ապա սրանք այստեղից և նրանք այնտեղից մարտի բռնվելով, առավոտից մինչև երեկո կռվեցին: Եվ երբ գիշերն իջավ, Դավիթը գնաց Հալիձոր: Առավոտյան, երբ թուրքաց զորքերը իմացան, որ Դավիթը գնացել հեռացել է իրենցից, և իրենց այլևս վտանգ չի սպառնում ոչ մի կողմից, համարձակ գնացին Գուրհամի կողմերը և սկսեցին կոտորել ու ասպատակել գյուղերը, մինչև եկան պաշարեցին Մեղրին: Այդ լսելով, շրջակա թուրք բնակիչները եկան հավաքվեցին և միացան նրանց՝ Թավրիզի ու Սև լեռան կողմերից, դարձան տասնութ հազար: Մոտենալով պաշարեցին Մեղրի ամուր ավանը:

Իսկ Մեղրիի բնակիչները, պատերազմող բոլոր տղամարդիկ համախմբվեցին երեք թաղում՝ նրանց դեմ մարտնչելու համար: Եվ պաշարման հինգերորդ օրը այլազգիների ամբողջ բազմությունը գրոհով զավթեց Փոքր թաղը: Եվ հայոց զորականները, որ ներսում էին, շտապ հասան բռնեցին գետի անցքերն ու կամուրջները, որպեսզի թշնամիները չկարողանան ավելի առաջ շարժվել, և թշնամու զորքերը մնացին Փոքր թաղում:

Մեղրեցիները սուրհանդակ ուղարկեցին Գուրհամի գավառը՝ Կալեր, ասելով՝ «Ահա թուրքերը հասան, գրավեցին մեր Փոքր թաղը: Եվ եթե հիմա մեզ օգնության չհասնեք երկու օրում, մենք նրանց բազմությանը դիմադրել չենք կարող»: Եվ երբ

սուրհանդակը հասավ նրանց, անմիջապես գիշերով ելավ Ստեփանոս Վրդանեսյանը՝ Շահումյան տնից և Եկդաստյան ավանից, որ և փոխանորդն ու տեղակալն էր Պապ զորապետի, գնաց Չավնդուր գավառը, Պայինտուր սպարապետի մոտ, նրան տեղեկացրեց մեղրեցիների ծանր ու նեղ վիճակը: Սա մարդիկ ուղարկեց Չավնդուր, որպեսզի զորականներն արագ հավաքվեն: Եվ եկան այնտեղ համախմբվեցին երկու հազար քաջ սպառազեն այրեր Չավնդուրից ու Գուրհամից, և Պայինտուր զորապետը նրանցով ելավ, գնաց այն գիշեր բանակեց Մազրան ավանում, և Ստեփանոսը՝ նրա հետ: Լուսադեմին Ափկիսի կողմերից անցնելով, եկան մտան Մեղրի: Իսկ թուրքերը երբ իրենց բանակատեղից տեսան հայոց զորքերը, չէին հավատում, թե ուրիշ տեղից օգնություն է հասել, այլ ասում էին՝ «Մեղրեցիները իրենց կանանց տղամարդու շոր և պատերազմի զարդ են հագցրել ու նրանց ձեռքը տվել բազում սուտ դրոշակներ՝ մեզ վախեցնելու համար»:

Սրանք դեռևս Մեղրի չէին հասել, քաջ ու արի մեղրեցիների զորքերը այն գիշեր ինչ սխրանքներ գործեցին: Անցնելով գետի մյուս ափը, անսպասելի ժամի թշնամու բանակի մեջ մտան և նրանցից շատերին սուր-սուսերով խորտակեցին, իսկ Շահիսլամի որդին երկու հազարով փախավ Օրդուվար քաղաքը: Եվ որովհետև իրենք քիչ էին, չկարողացան իսպառ ջնջել և վերացնել նրանց այնտեղից, վերստին դարձան Մեղրի:

Իսկ հայոց օգնականները երբ եկան և Մեղրիի Մեծ թաղը հասան, մեղրեցիները շտապ նրանց համար կերակուր պատրաստեցին: Այնժամ Պայինտուրը, որ իշխան էր և իր հետ եկած ամբողջ զորքի հրամանատարը, արգելեց նրանց, ասելով. «Մենք ոչինչ չենք ուտի, մինչև աստծու ողորմածությամբ մեր թշնամիներին չվռնդենք»: Նրա մտածմունքն ու ձգտումը պատերազմի գործն արագ վերջացնելն էր, որովհետև մեկ օր առաջ այլազգիները գրել էին թուրք զորականներին, որոնք Երասխ գետի մյուս կողմում էին, որ գան օգնության հասնեն իրենց, և նրանք պատրաստ էին բազում գնդերով գալու սրանց օգնության: Ուստի Պայինտուրը շտապ զորահանդես արեց ամբողջ իր հետ եկած և ամրոցում եղած զորքերի, դասդասեց և նրանց երեք գնդի բաժանեց, յուրաքանչյուրը՝ ութ հարյուր վաթսուն սպառազեն մարդով:

Ապա մի գունդն ընդառաջ ուղարկեց թշնամիների դեմ ճակատելու և մյուս երկու գնդերը ձայն տալով խրախույս կարդացին և վրա հասան թուրքական զորքերին աջից ու ձախից և օրվա տասնվեցերորդ ժամից մինչև քսաներորդ ժամը իրենց մեջ առան անօրենների զորքերի բազմությունը և նրանցից կոտորեցին ավելի քան տասնմեկ հազար մարդ ու մյուսներին հալածեցին Օրդուվար, իսկ հաջի Շափիին, որ նրանց գլխավորն էր, բանտարկեցին: Նրանցից խլեցին սրերն ու պատե-

ռազմական մյուս գործիքները, նրանց ամբողջ ավարն ու կողոպուտը, և մեծ ուրախություն եղավ Կապանի բոլոր բնակիչներին:

Գուրհամի գյուղացիները, որ ավազակների ահից անցել էին Չավնդուրի երկիրը, դարձան գնացին ու բնակվեցին յուրաքանչյուրն իր տեղում:

Մոտ մեկ տարի անցել էր, Երևանի խանի եղբայրը բազում զորք հավաքելով գնաց իր եղբորն օգնության, որովհետև նա պաշարված էր օսմանցիների զորքերի կողմից, Երևան քաղաքի ամրոցում: Եվ երբ սա բազում զորքով հասավ Օրդուվար քաղաքը, տեղի բոլոր մահմեդականները նրան ընդառաջ ելան և բողոքելով Մեղրիի հայերից, ասացին. «Դատաստան տես մեղրեցիներին, որովհետև նրանք կոտորեցին, ոչնչացրին քաղաքիս բոլոր տղամարդկանց»: Եվ նա ծառաներից մի երկուսին ուղարկեց Մեղրի, իր մոտ կանչելու գլխավոր իշխաններից ոմանց, իմանալու համար աղմուկի պատճառը:

Իսկ Մեղրիի իշխանները լսելով այդ՝ անհանգստացան, երկմտեցին, միատեղ հավաքվեցին, խորհրդակցեցին և ասում էին. «Ի՞նչ անենք. որովհետև եթե գնանք նրա մոտ՝ մեծ վտանգ է, եթե չերթանք, նույնպես մեծ դժբախտություն է մեզ և ամբողջ ժողովրդին»: Վերջապես, նրանց մեծ մասը որոշեց հասարակության շահի համար մահվան վտանգը հանձն առնել և գնալ:

Եվ երբ ելան գնացին և հասան Օրդուվար քաղաքը, բոլոր քաղաքացիները հարձակվեցին, որ սպանեն նրանց: Բայց խանի ծառաները թույլ չտվեցին, մինչև տարան հասցրին նրանց խանի մոտ, և քաղաքացիները գնացին նրանց հետ: Երբ խանին հանդիպեցին, քաղաքացիները նորից սկսեցին աղաղակել և ասել. «Դա՛տ արա մեր և մեղրեցիների միջև, քանի որ կործանեցին, սպառեցին մեզ»:

Եվ խանի հարցումին մեղրեցիները պատասխան տվին. «Մենք դրանց ոչ մեկի դեմ մեղավոր չենք և ոչ մեկին իզուր չենք սպանել, այլ դրանք բազում զորք հավաքեցին և հարձակվեցին մեզ վրա, մեր բազմաթիվ գյուղերը կոտորեցին ու կործանեցին, գերի տարան, ապա առանց պատճառի, եկան ու մեզ պաշարեցին, ուզեցին լիովին բնաջնջել: Մենք մեզ պաշտպանելու համար ելանք դրանց դեմ և հեռու վանեցինք»:

Այնժամ խանն ասում է օրդուվարցիներին. «Ո՞վ հրամայեց ձեզ հարձակվել նրանց վրա՝ կողոպտելու և կոտորելու համար»: Եվ նրանք պապանձվեցին ու չկարողացան պատասխանել: Ապա խանը նրանց ասում է. «Ո՞վ եղավ ձեզ առիթ ու առաջնորդ՝ նրանց վրա հարձակվելու»: Եվ նրանք ասում են՝ լեռազցի Սափի-դուլին: Եվ խանը, բռնելով Սափիին, խստագույն գանահարությամբ խրատեց և տուգանք վերցրեց նրանից: Իսկ մեղրեցիներին խաղաղությամբ թողեց իրենց տեղերը և ինքը հեռացավ այնտեղից:

Այս ամենը երբ այսպես եղավ, Դավիթ-բեկը իր զորականներին թուրքմենների դեմ ուղարկեց: Նրանք այնտեղ հասան գիշերով, հարձակվեցին լեռնաբնակների վրա, խփեցին, կոտորեցին նրանց: Ու մինչդեռ հետապնդում էին փախչողներին, Մխիթար սպարապետը միայնակ հանդիպեց թշնամիներին, և նրան քարկոծելով, բռնեցին: Իսկ նա աղաղակեց և ասում էր. «Հասեք ինձ, զի մատնվել եմ թուրքերի ձեռքը»: Տեր-Ավետիսն անմիջապես ազատեց նրան թշնամիների ձեռքից, և գնացին Հալիձոր, Դավթի մոտ, որը տեսնելով այդ ամենը, գոհ մնաց:

Դարձյալ այդ օրերին Պարկուշատի թուրքերի մի ցեղ գալիս, վրաններով բնակվում է Կապանի լեռնակողմերում, ինչպես անում էին միշտ ուրիշ ժամանակներ՝ ամռանը, իրենց բնակավայրի տոթի խստության պատճառով: Երբ Դավիթ-բեկն այդ լսեց, անմիջապես իր Մխիթար սպարապետին հազար հարյուր զինյալներով նրանց վրա ուղարկեց, և նա գնալով փնտրեց և գտավ նրանց Կարմիր վանք կոչված ավանի վերին կողմերում և հարձակվեց նրանց վրա: Բայց խանը բազում զորքով շտապ ընդառաջ է գալիս Խոտանանի կողմերում: Հայոց զորականները երբ այդ տեսան, սաստկացրին նրանց դեմ կռիվը, մինչև նրանց ստիպեցին նահանջել:

Բայց քանի որ Մխիթար սպարապետը նեղացած էր իր տեր Դավթից, ուստի, երբ սրանք սկսեցին կոտորել թշնամիներին և վտարել, Մխիթարը հրամայեց զորավարներին ետ գալ պատերազմից, և այդպես արեցին: Բայց առաջամարտիկները, տեսնելով, որ ետևում եղած զորքը ետ դարձավ, մտածեցին, թե նրանք փախչում են պատերազմից և սկսեցին բոլորը խույս տալ մարտից: Տեսնելով այդ իրարանցումը, թշնամիների զորքը դարձավ սրանց դեմ: Եվ սրանցից խփեցին երեք կամ չորս հարյուր հոգու և ոմանց կենդանի վերցնելով, մեծ տանջանքներով տարան Պարկուշատ: Սրանց մեջ էր և Ստեփանոս Շահումյանը:

Երբ Դավիթն այս լսեց, սաստիկ բարկացավ Մխիթարի վրա և հրամայեց գլուխը կտրել: Բայց մեծամեծները միջնորդեցին և դժվարությամբ փոխեցին մահվան վճիռը: Եվ սուգ արեց Դավիթը քաջ Ստեփանոսի և իզուր կորսված այնքան զորքի համար: Իսկ Ստեփանոսը երբ տարվեց Պարկուշատ, այնտեղ խանի տանը հանդիպեց մի բարեսեր թուրքի, որ գթալով նրան փախցրեց: Եվ երբ Դավիթը տեղեկացավ նրա ազատվելը, մխիթարվեց: Զարնվածների մեջ էր նաև Պալի զորավարը՝ մելիք-Փարսադանի որդին, որի պարանոցը կիսով չափ կտրել, իրեն գցել էին մի բաց տեղ, Խոտանանի մոտ: Բայց կտրել էին ոչ թե ամբողջ պարանոցը, այլ կեսը միայն: Ուստի քիչ անց ուշքի գալով, ձեռքով գլուխն իր վրա բռնած գնաց մտավ վայրի մացառների մեջ, մինչև օրվա մթնելը և գիշերը ճանապարհ ընկնելով եկավ և երեք օր հետո հասավ Հալիձոր: Եվ բոլոր տեսնողները շատ զարմացան, որ չէր մահացել, և կենդանի է մինչև օրս և մելիք է Հալիձորում:

Գ
ԼՈՒԽ
ԵՐՐՈՐԴ

Թե ինչպես օսմանցիները եկան և մտան Կապան, ինչքան մարտեր մղեցին նրանց դեմ Դավիթ-բեկը և իր քաջ զինականները, և թե որքան մեծամեծ հաղթանակներ տարան նրանց դեմ

Սրանք էին
ԴԱՎԻԹ-ԲԵԿԻ
զորավարներն
ու զորապետները,
երբ Ճեն հերոս
ասպետն էր.
Մախրանը,
մեծ Գուրգենն
վրացի, Հով-
հաննեսը,
Բաղդասարը,
Բայգուն իշխանը,
Ռաշիդ-ցարուն
վրացի իշխանը

դարձյալ Ավ-
դալանը,
փոքր Գուրգենն,

(Սրանք վրացի են կոչվում, որով-
հետև Երկրին էին, ոչ թե հայ-
ազգից: Դավիթ-բեկի զորավարներ
հայերն էին, մոլեռանդ մահմեդականներ
(զորապետներ էին, ոչ թե զորավարներ)



ՀԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ԱՆՏԻԽՐԸ,
ՂԱՐԱԼՈՒՀԸ,
ՌԱՆԴԵՎՈՒՆԸ,
ԵՐԻԱՉԱՐԸ,
և այլն,
այս-քան պրիքով:
Ղ-ԱՎԱԾԻ ԾԱՀԿԵՐՈՒՄ
բնակվող քաջպատրաստ
վարձկանները սրանք
էին.
ՊԱՅԻՆԱՇԱՐ կամ
բանակները ՊԱԿԻ կամ
բանակները ԱՐԻԱՆԻ,
ԱՄԵՎԱՆԱՅԻ, և
՝սրանից հետո
550 դրամ:

ՈՎՔԵՐՏԱԾԻ ԿՈՒՍԱ էին՝
ՂԻՆԴԻՆ, ԱՅՏԻՆ, ԵՍԱՅԻՆ,
ՏԻՐԱՑՈՒ ՝ն, ՍԻՄԵՈՆԻՆ,
ԱԲԳԱՐԻՐ...

Տիրոջ 1724 և հայոց 1173 թվականին օսմանցիների սուլտան Ահմետը, որ բռնությամբ տիրում էր Պարսից ծոցից մինչև Եգիպտոս և Լիբիա, և այնտեղից մինչև Լյուրիկե ու մինչև Պոնտոսի ամբողջ ծովը և Հայաստանի մեծ մասը և այլ բազում ազգերի, թագավորություններ, իշխանություններ ու նրանց երկրները, երբ լսեց պարսից արքայի վտարվելը հայրենի գահից, մտածեց ինչ հնարով լինի յուրացնել այն տերությունը: Ուստի հրամայեց զորապետին ելնել, զորաժողով անել բոլոր աշխարհներից և գնալ հարձակվել Պարսկաստանի վրա, զավթել նրանց քաղաքները: Նա անթիվ ու անհամար զորքով հասավ Մեծ Հայաստանի այն կողմերը, որ Պարսկաստանի ձեռքին էր: Եվ որտեղ պատահեին՝ սրով ու սուսերով կոտորում էին իրենց դիմադրողներին և բոլոր զորքերը վերադառնում էին հարուստ ավարով՝ տարեցտարի, մինչև հղփացան, հարստացան և իրենց ամբողջ քաղաքներն ու գյուղերը լցրին ավարներով ու բազմաթիվ գերիներով՝ հայերից ու պարսիկներից: Բայց ո՞վ կարող է պատմել մայրերի ու զավակների՝ անօրեն զավթիչներից կրած աղետները և նրանց հայրերի ու եղբայրների անողորմ կոտորածը: Սրանք որ այսպես զորացան և Երևանի մայրաքաղաքը երկարատև պաշարումից հետո գրավեցին, ամբողջ բնակչությունը սրի մատնեցին: Ապա տիրոջ 1726 և հայոց 1175 թվականին անթիվ-անհամար զորքով Սյունյաց աշխարհը մտան և հասան բոլոր կողմերից շրջապատեցին Դավթի երկիրը՝ Կապանի յոթնաբերդ գավառը:

Այնժամ գավառի բոլոր բնակիչները խառնվեցին, խուճապի մատնվեցին, լքեցին Դավթին և գնացին մտան օսմանցիների լծի տակ: Եվ Դավիթը մնաց մենակ, տասնյոթ սպառազեն այրերով՝ Հալիձորի անապատում, ուր կառուցել էր անառիկ բերդը: Նրա հետ էին նաև երեք եպիսկոպոս, տասներեք քահանա, տեր-Ավետիսն ու մելիք-Փարսադանը՝ սակավաթիվ մարդկանցով, որովհետև ամբողջ զորքը փախավ նրանցից: Սակայն Դավիթը այս պայմաններում չհուսալքվեց, չհրաժարվեց իր ծրագրերից, չվախեցավ բարբարոսների բազմությունից, չդադարեց սխրանքներ գործելուց, այլ արիաբար շարունակեց ամրացնել բերդը, պատրաստել պահեստները, զորականներ հավաքել շուրջը:

Օսմանցիների Կապան գալու իններորդ ամսին, որ Դավթի գալստյան հինգերորդ տարին էր, եկան Կապան հասան Պեքիր և Արապ-Ալի փաշաները, բազմաթիվ զորքով, իրենց հետ առած նաև Պարկուշատի Փաթալի խանին: Եվ նրանց հրամանով եկան բոլոր կողմերից հավաքվեցին թուրքերը, իրենց հետ բերելով նաև հայկական զորքեր Գողթն գավառից, Ագուլիս քաղաքից, Օրդուվարից, Փիսիանից, Պարկուշատից, Կապանից, Մեղրիից, այլև դարաչոռլու կոչված թուրքերին ու Սև լեռան բնակիչներին: Ինչևէ, շատերից քիչը կասենք. եղան մոտ վաթսուն կամ յոթանասուն հազար և առավել ևս շատ, այնքան, որ նրանց հեծյալներն ու հետևակները լցրին դաշտերն ու լեռները: Եվ եկան բանակեցին Հալիձորի գետի մյուս կողմում, քառասնորդաց պահքի տասներեքերորդ օրը: Իսկ Դավթի զորականներից շատ-շատերը, գնալով փաշաների մոտ, անձնատուր եղան: Բայց ովքեր՝ քաջ էին ու արի, խիզախում էին և պատրաստվում մարտի:

Եվ Դավիթն իջավ բերդից ու ամրացավ գյուղում, որ գետի այս կողմն էր՝ նրանց բանակի դիմաց, և թշնամուն ընդառաջ ուղարկեց մի զորագունդ, հարյուր վաթսուն հոգուց, գետանցները փակելու համար, և եկան փակեցին և երկու օր նրանց թույլ չէին տալիս գետն անցնել: Բայց երրորդ օրը հայ հրացանակիրները, որ օսմանցիների զորքերի հետ էին, գետն անցան այլ տեղից և եկան մտան, գրավեցին գյուղի մի կողմը և մեկուսացրին Դավթի զորքերը:

Դավիթն ու իր զորականները՝ երեք հարյուր հիսուն հոգի, մտան անապատի բերդը: Օսմանցիների ամբողջ բանակը գետն անցավ, և մոտենալով, բերդի շուրջը պահպանություն կարգեցին: Այնտեղից թնդանոթների ու հրացանների գնդակներ էին ներս թափում: Եվ սրանք ներսից նույնը նրանց էին անում. վեց օր միմյանց դեմ կռվում էին. հակառակորդի կողմից օրական հարյուր կամ երկու հարյուր, երբեմն երեք կամ չորս հարյուր զոհ էր լինում, իսկ սրանցից՝ դիրքի ամրության շնորհիվ, հազիվ մեկ կամ երկու հոգի:

Բայց յոթերորդ օրը, լուսադեմին, ամրոցը պաշարողները պատրաստվեցին վրձռական գրոհի և մոտեցան պարսպին, ոչ թե երեկվա ու նախորդ օրվա նման, այլ՝ ահագին մեծ մեքենաներով: Հսկայական սանդուղքների նմանվող քսանվեց մեքենա ուսաբարձ բերում էին, հենում պարսպին, և խուժանի բազմությունը երեք խմբի բաժանված, երեք կողմից գրոհելով, մեքենաների վրայով բարձրանում էր պարիսպները:



Իսկ պարիսպների պահապանները վերևից նրանց խփելով ներքև էին գլորում մեքենաներից, և թուրքերի դիակների բազմությունը կարկտի սաստկությունից թափվող վաղահասուկ թզի նման ծածկում էր գետինը՝ մեքենաների տակ, և այդ բոլորը արհամարհելով, առավոտից մինչև օրվա ութերորդ ժամը մեծաձայն գոչյուններով ու իրարանցումով դեպի պարիսպներն էին դիմում:

Դիտելու բան էր կատաղի զորքի աղմուկ-աղաղակի այդ ահավոր տեսարանը, որովհետև երբ մեքենաները դրեցին, հարյուրավոր ու հազարավոր դրոշակակիրներն առաջ շարժվեցին, ապա ամբողջ զորքը հորդահոս գետի հորձանքի նման ահագին գոչումով թափվում էր, կամ հողմերի ուժգնությունից փոթորկած ծովի ամեհի ալիքների պես հորձանքով գալիս, իրարից առաջ էին անցնում, և այն մեքենաներից դեպի պարիսպներն էին դիմում: Եվ առհասարակ երկու կողմից փողի ու թմբուկի ձայները, զորքերի գոչյունները, հրալից գնդակների շաչյունը, հրազենների ճայթյունը ականջ էին խլացնում:

Իսկ ներսում եղածները, երբ ամրոցից տեսնում էին այդ ահեղ տեսարանը, թշնամի բազմաթիվ գնդերի ու դրոշակների պատրաստությունը, նշանների փողփողելը և զինվորների զենքերի շողյունը, մահն աչքն էին առել: Եվ օրվա ութերորդ ժամին, երբ տեսան, որ այնուհետև ապրելու հույս չի մնում, Մխիթար սպարապետն ու տեր-Ավետիսը խրախույս կարդացին և զենքի դիմեցին: Այնժամ զորքերը նրանց շուրջը խմբվեցին (բացի պարիսպների պահապաններից), զինվեցին, պատրաստվեցին, զենք կապեցին, բոլորը զայրույթով վառվեցին թշնամու դեմ:

Սկսեցին խոսել Մխիթարն ու տեր-Ավետիսը և ասացին. «Արիացեք, չերկնչեք, հետևեցեք մեզ, եթե հասել է մեր վախճանը՝ քաջաբար մեռնենք, որովհետև մեզ համար ավելի լավ է արիությամբ պարիսպներից դուրս մեռնել, քան այստեղ, մեր աչքերի առաջ տեսնել մեր ընտանիքների ու բարեկամների մահը և այլ դժնդակություններ»: Այս խոսքերն ասացին և իրենք ամենից առաջ շտապ դուրս եկան պարսպի գաղտնի դռնով, և երեք հարյուր զինվածներ հետևեցին նրանց:

Ո՜վ սքանչելիք. երեք հարյուր զինյալներ օրվա ութերորդ ժամին ձայնեցին, հորդոր կարդացին, հարձակվեցին յոթանասուն հազարի վրա: Նախ գրոհեցին աջակողմյան գնդին, աջ ու ձախ կոտորելով:

Իսկ թշնամիները, երբ հանկարծ տեսան իրենց վրա հասած այդ ահեղ հարձակումը և կոտորածը, գլուխները կորցրած, խուճապահար դիմեցին երկրորդ և երրորդ խմբերի մոտ, աղաղակելով, թե հարձակվեցին, կոտորեցին մեզ քրիստոնյաները: Եվ լսելով՝ բոլորը զարմացան, ապշեցին, տկարացան, հուսալքվեցին, կազմալուծվեցին, և ահ ընկավ նրանց վրա, որովհետև մինչդեռ հույս ունեին մեծ հաղթանակի, ամրոցն իրենց ձեռքը գցելու, հանկարծակի վրա հասավ մի անողորմ կոտորած:

Ուստի բոլոր զարհուրած և սասանած ասում էին մեկը մյուսին՝ ով ուզում է կյանքը փրկել՝ թող փախչի: Որովհետև նրանցից շատերը բազմիցս տեսել էին Դավթի ու նրա մարդկանց քաջությունները, և քանի որ սարսափը, աղաղակը, նրանց բանակի անասելի կոտորածը գնալով սաստկանում էին, ուստի այնուհետև ոչ ոք չէր համարձակվում շրջվել Դավթի դեմ, այլ բոլորը շփոթված ու խուճապահար փախչում էին:

Իսկ սրանք և բերդում մնացածները համարձակ վրա հասան, խփեցին, շատերին տեղնուտեղը սպանեցին, ուրիշներին խոցելով ու վիրավորելով հալածեցին, մինչև որ նրանցից չթողին երկու հոգի իրար մոտ: Եվ այն օրը օսմանցիների բանակից ընկավ տասներեք հազար զինվոր, իսկ սրանցից՝ շատ քչերը: Օսմանցիներից խլեցին հարյուր քառասունութ դրոշակ և նրանց բանակի ամբողջ կապուտ-կողոպուտը:

Դավիթն այնուհետև ցանկանում էր ճակատամարտ տալ օսմանցիներին և վտարել նրանց Կապանից: Նա Մխիթար սպարապետին ու տեր-Ավետիսին վաթսունվեց զինված տղամարդկանց հետ ուղարկեց Դուզալի խանի և նրա եղբայր Լեքազի խանի մոտ և ասում է. «Եկեք միաբանելով պատերազմ տանք օսմանցիներին»: Եվ եկան գտան պարսիկ խաներին Քուրդաշյան ավանում, որ Երասխի մյուս ափին է, Օրդուվարի կողմերում: Որովհետև այն օրերին շահ-Թահմազը Թավրիզում էր, իսկ զորքի հրամանատարը, որ Դուզալի խանն էր, բազում զորքով Երասխի կողմերում էր, օսմանցիների հանդիման: Եվ երբ հաղորդեցին Դուզալի խանին Դավթի խոսքերը, նա վախեցավ այդ անել: Բայց նրա եղբայր Լեքազի խանը աշխատում էր համոզել նրան միաբանելու Դավթի հետ:

Ու մինչդեռ վիճում էին սրա շուրջը, Օրդուվարից օսմանյան զորքեր ելան քսան դրոշով և գնացին լցվեցին Կարճիվանի դաշտը: Եվ Մխիթարն ու տեր-Ավետիսը ասացին խանին՝ «Հասեք նրանց վրա»: Իսկ նա վախեցավ և չուզեց հարձակվել:

Այնժամ ելան գնացին այնտեղից երկուսը՝ վաթսունվեց մարդով, օսմանցիների սակավ զորքերի պատահելով անցան գնացին նրանց մոտով, և օսմանցիների զորքերը մտան Մեղրի և միացան Մեղրիի փաշայի զորքերին, դարձան քսաներկու հազարանոց զորք:

Իրիկնաժամին Մխիթար սպարապետն ու տեր-Ավետիսը Դուզալի խանին լուր ուղարկեցին՝ «Այս գիշեր հարվածելու ենք Մեղրիին, մեզ օգնության եկեք»: Եվ նա ուղարկեց հիսուն զինվոր, և սկսեցին զորքը դասավորել և հրահանգ տալ ու ասել, որ առավոտյան այգաբացին հարձակվեն Մեղրիի վրա: Իրենք երկուսով գալիս հասնում են Մեղրիի այգեստանները և այնտեղ իրենց շուրջն են հավաքում բոլոր փախած մեղրեցիներին, որոնք օսմանցիների դառն ծառայությունից նեղված՝ այստեղ, լեռներում շրջում էին թափառական: Նրանց բոլորին հավաքեցին, կազմակերպեցին ու Մեղրիի վերևում դարանակալեցին: Իսկ իրենք քիչ մարդկանցով զինված այնտեղից գիշերով գաղտնաբար մտան Մեղրի:

Երբ լուսանում էր, նրանց զորքը չէր եկել: Բայց օսմանցիների զորքերի մեջ լուր տարածվեց, թե հայերը պարիսպներից դուրս հավաքում են իրենց զորքը. զենք վերցրին, ձի հեծնեցին և պատրաստվեցին պատերազմի:

Այնժամ Մխիթար սպարապետը, տեր-Ավետիսը և նրանց զինակիցները մերկաց-

ին սուսերները, մտան բերդի մեջ, օսմանցիների հարկահանին սպանեցին, նրանցից ում հանդիպեցին կոտորեցին, մյուսներին խուճապահար հալածեցին: Փաշային մինչև Փոքր թաղ հասցրին: Այդտեղ վրա հասան նաև դարանամուտները Մեղրիի վերևից, և օսմանցոց զորքերն սկսեցին փախչել:

Այնուհետև Մխիթարը, տեր-Ավետիսը և մյուսները, տեսնելով, որ օսմանցիների վրա հարձակվեցին նաև դարանամուտները, թողին նրանց և շտապեցին հասնել, գրավել նրանց ճանապարհի կիրճերը, որ Երասխի երկայնքով կային: Երկարաձիգ մի կիրճում, որ մեկ-երկու ժամվա ճանապարհ էր, մի կողմը մեծ քարաժայռ էր, մյուսը՝ հորդահոս Երասխը, հայերը ելան փախստական թուրքերի դեմ: Վերջինները տեսնելով հայերին, շփոթվեցին, նեղվեցին, որովհետև շրջապատված էին բոլոր կողմերից և ստիպված էին անցնել Երասխ գետը: Իսկ հայերը հարձակվեցին, շատերին դիաթավալ արեցին, մյուսներին խեղդեցին գետում: Եվ դարձան, եկան հասան Մեղրի ու այնտեղ տեսան թուրքերի անթիվ գլուխներ, նրանց անհամար ձիերն ու ջորիները, անչափ գույք, շուրջ չորս հարյուր տաղանդի ապրանք, հարկահանի բեռը բացին ու այնտեղ՝ երեսուներկու հազար մուրհակ, և այդ բոլորն այրեցին:

Սրանից հետո որոշ ժամանակ անցավ, օսմանցիների ասպատակիչ փաշան բազում զորքով եկավ ու բանակեց Բեխ գյուղում և մոտ մի շաբաթ ամբողջ օրը փնտրում էր զանազան հնարներ՝ Դավթին ու նրա զորականներին նենգությամբ որսալու, և ոչինչ չկարողացավ անել: Իսկ Դավթի զինվորները մի գիշեր հարձակվեցին նրանց վրա, կոտորեցին նրանցից շատերին և փաշային հալածական դարձրին:

Արդ՝ Քրիստոսի 1727 թվականին, որ Դավթի Կապան գալու հինգերորդ տարին էր, երբ Դավիթ բեկը տեսավ, որ իր թշնամիներն ամենուրեք խորտակված են ու վտարված, պարսից շահ-Թահմազին ուղարկեց սպանվածների չորս բեռ գլուխ: Այդ տեսնելով շահը շատ ուրախացավ իր թշնամիների մահով և զարմացավ Դավթի ու նրա զինվորների քաջագործությունների վրա, ընծաներ տվեց և հրովարտակ գրեց նրան այսպիսի խոսքերով.

«Շահ-Թահմազ պարսից արքայից քաջ Դավիթ-բեկիդ և հայոց քաջ զորավարներին, որ քեզ հետ են՝ ողջույն: Շատերից բազմիցս իմացել ենք քո սխրանքների մասին, բայց հիմա կարծես նաև ականատես եղանք ձեր մեծամեծ քաջագործությանց, որ մեր թշնամիների դեմ գործեցիք:

Եվ ահա կարգեցի քեզ այսօր իշխան և գլուխ մեր բոլոր իշխանների, որ այդ կողմերում են, և Կապանի երկիրը, որ վերցրիր քաջությամբ՝ քեզ լինի: Բայց դու պիտի ելնես ու քո շուրջը համախմբես բոլոր զորքերը և այդ կողմերի խաներին, դուրս վանես օսմանցիներին քո սահմաններից»:

Եվ նրան ուղարկեց մի խաչվառ և մի պատվական նժույգ, նաև դրամ կտրելու իրավունք, իսկ նրա զորապետներից յուրաքանչյուրին մեկական պատմուճան: Եվ

եկան Դավթին հնազանդեցին բոլոր իշխաններն ու թուրքերի գավառապետները:

Դավիթը ելավ Հալիձորից, գնաց Մեղրի ու բանակեց այնտեղ: Ժողովելով իր մոտ Մեղրիի, Չավնդուրի ամբողջ զորքերը, շարժվեց գնաց, բանակեց Կարճիվան ավանում, այնտեղ դասավորեց բոլոր զորքերը, քաջ զորավարների գլխավորությամբ ուղարկեց Օրդուվար քաղաքի վրա:

Եվ գնացին, այնտեղ հասան գիշերով, քաղաքի վրա հարձակվեցին և կոտորեցին օսմանցիներից երեք հարյուր տղամարդ, մնացածները փախան և գնացին քաղաքից դուրս մի հարմար տեղ բանակեցին:

Իսկ Դավթի զորքերը ուրախության սեղաններ բացին: Մինչդեռ բազմել էին զորավարները սեղանի շուրջը, եկավ Դավիթ-բեկը, զայրանալով նրանց վրա, ասում է. «Ձեր թշնամիները քաղաքից դուրս հավաքված բանակել են, իսկ դուք այստեղ նստած խրախճանում եք»: Անմիջապես թողնելով ուտելը, ձի նստեցին, հարձակվեցին օսմանցոց բանակի վրա: Իսկ նրանք այդ տեսնելով կարծեցին, թե պարսից զորքն է, և ընդառաջ ելան պատերազմելու, բայց երբ ստուգեցին իմացան, որ Դավիթ-բեկի զորքն է, փախուստի դիմեցին:

Եվ սրանք ձիերի ու ջորիների բազմաթիվ ջոկեր խլեցին նրանցից, այդ ամենը Դավթին ուղարկեցին և իրենք դիմեցին Դաշտ կոչված ավանը: Իսկ ավանի մարդիկ, երբ հեռվից տեսան զորքերի գալը, կարծեցին, թե այլազգի զորք է, փախան Ագուլիս:

Այնտեղից շարժվելով Մխիթար սպարապետն ու տեր-Ավետիսը զորքով դիմեցին դեպի Ագուլիս: Եվ երբ եկան քաղաքի մեծ դարպասին հասան, պահապանները սրանց տեսնելուն պես փախան: Իսկ սրանք անարգել մտան քաղաք, գնացին վաճառատեղի՝ փնտրելու և գտնելու օսմանցիներին և այնտեղ գտան օսմանցիների փախած հարկահաններին և իրենք գնացին բանակեցին սուրբ Թովմա առաքյալի վանքում:

Ու մինչդեռ նրանք այդտեղ էին՝ դրսից աղմուկ-աղաղակ լսեցին, և նրանցից երկու հոգի ձի առան, դուրս ելան ու տեսան, որ մի թուրք մեկին առևանգած գերի էր տանում, հետապնդեցին նրան, և նա գերուն թողնելով փախավ:

Այստեղ մի քիչ մնալով, դիտանոցից տեսան, որ Դավիթ-բեկը նույնպես գալիս մտնում է քաղաք, նրան ընդառաջ գնացին: Եվ նա իր զինվորներից յուրաքանչյուրին մեկական պատմուճան հագցրեց, և դարձան վերստին բանակեցին սուրբ Թովմայում: Իսկ քաղաքի տղամարդիկ իրենց սովորության համաձայն, բոլորը գալիս և համբուրում էին Դավիթ-բեկի ձեռքը:

Մելիք-Մուսին, որ քաղաքապետն էր, երբ գալիս ներկայանում է, Դավիթը յուրայիններին հրամայում է՝ «Այս գիշեր հատեցեք Մուսիի գլուխը», որովհետև նա նենգավոր ու խարդախ մարդ էր: Բայց մելիք-Փարսադանը առաջ է գալիս և բարեխոսում նրա համար և մահվան վճիռը փոխել տալիս:

Եվ սրանք տասն օր այնտեղ մնացին, երեք անգամ օսմանցիների զորքերը

նրանց վրա հարձակվեցին և երեք անգամ խորտակվեցին Դավթի քաջամարտիկ զորքերից:

Սրանից հետո պարսից արքան Դավթին օգնության է ուղարկում երեք խաների, և օսմանցիները վերստին հարձակվելով դարձյալ խորտակվեցին: Այս ամենը այն պատճառով էր տեղի ունենում, որ ագուլեցոց իշխանները գաղտնապես դաշնակից էին և օսմանցիների հետ:

Երկու օր անց եկավ հասավ օսմանցիների զորքի բազմությունը և լցրեց Մարադու դաշտը: Այնտեղ բաժանվեցին երեք մասի: Իսկ ովքեր Դավթի հետ էին՝ նույնպես երեք մասի բաժանվեցին. պարսից խաները մի կողմը, հայոց զորքը մի կողմը, իսկ տեր-Ավետիսը իր զորքով գնաց Երասխի կողմը: Երբ խմբվեցին պատերազմելու, պարսից խաները փախուստի դարձան, բայց հայոց զորքերը հաստատ մնացին, խփեցին, սատակեցին օսմանցիներին, իսկ ոմանց փախուստի մատնեցին: Ապա դարձան հետապնդեցին խաներին, հասան նրանց (նրանք Թավրիզ էին փախչում) և նրանց ամբողջ զորքը Ագուլիս վերադարձրին: Բայց խաները փախան, թողնելով իրենց տները, տիկնանց ու աղախիններին:

Մոտ երկու օր հետո Ագուլիսի տղամարդիկ և մելիք-Մուսին ի հայտ բերին իրենց թշնամանքն ու դավաճանությունը, քանի որ քաղաքի մեջ գրոհ տալով հարձակվեցին Դավթի զորքերի վրա: Մինչդեռ նրանք սուրբ Թովմայի վանքում էին, քաղաքից դուրս, դավադիրներն սկսեցին քաղաքից հրազենով գնդակոծել Դավթի զորքերը: Բայց սրանք խնայեցին նրան՝ համազգի լինելու պատճառով և քանի որ չէին ցանկանում այնքան քրիստոնյաների արյուն հեղել, որովհետև այն քաղաքում կար մի տասը հազար հայ, ուստի մելիք-Փարսադանը դուրս եկավ և ասաց քաղաքի մարդկանց. «Եղբայրներ, հանգիստ եղեք, հրացան մի կրակեք, թույլ տվեք, որ մեր տերը դուրս ելնի, գնանք այստեղից և ձեզ ոչնչով չենք նեղի»: Իսկ ագուլեցիք առավել վատթար լինելով, հալածեցին, և մինչդեռ խաղաղության միջնորդը հաշտության խոսքեր էր ասում, դիտապաստ տապալեցին նրան, որ իրենց տիրոջը՝ մելիք-Մուսին մահից փրկել էր:

Իսկ ովքեր Դավթի հետ էին, երբ տեսան, հասկացան, որ այլևս վերջացել էր նրանց չարությունը, քանդեցին վանքի պարսպի մի կողմը և այնտեղից դուրս ելան: Երկու օր հետո Դավթի զորականները կրկին Ագուլիս արշավեցին և եկան, մոտեցան քաղաքին, երկու կողմից կրակ տվին, որ գուցե դուրս ելնեն մարտնչելու, որովհետև չէին կարող հանդուրժել չարիքը, որ գործեցին նրանք: Եվ երբ դուրս չելան, վերցրին ավարը և գնացին Մեղրի, ապա դարձան Հալիձոր ու այնտեղ օթևանեցին:

Եվ պատահեց, որ Դավիթը հիվանդացավ և մահացավ իր տանը, Հալիձորում, խաղաղությամբ, տիրոջ 1728 և հայոց 1177 թվականին, Կապանում իր իշխանությանը մնալով վեց տարի:

Դ
ԼԱՎԹԻ ԶՈՐԱՎԱՐՆԵՐՆ ՈՒ ԶՈՐՔԵՐԸ



*Անունները բերվում են այնպես, ինչպես բնագրում են գրված:

Ս

րանք էին Դավիթ-բեկի զորավարներն ու զորապետները, երբ Շենհեր ամրոցում էր. Մխիթարը, մեծ Գորգին վրացի, Հովհաննեսը, Բանդուր Զաքարիա իշխանը, Պայինտուր վրացի իշխանը (սրանք վրացի են կոչվում, որովհետև Վրաց երկրից էին, ոչ թե նրանց ազգից. քանի որ Դավիթն ու իր բոլոր զորավարները հայոց ազգից էին, լուսավորչական), դարձյալ Ավթանդիլն, փոքր Գորգին, Ծատուրը, Ղարակոզը, Թադևոսը, Եղիազարը, Հարությունը և այլք, այսքան զորքով.

Դավթի՝ Շենհերում բնակվող քաջ զորավարները սրանք էին. Պայինտուր զորապետը, Պակի զորապետը, Մինասը, Ստեփաննոսը, և նրանց հետ 550 զորք:

Ովքեր Տաթևում էին՝ Ղիջին, Այտինը, Եսային, Տիրացուն, Սիմեոնը, Աբգարը, նրանց հետ՝ 400 զորք:

Եվ մելիք-Փարսադանը Հալիձոր երկրում էր 250 մարդով:

Այլև տեր-Ավետիսը նույն Հալիձորում էր 468 հոգով. այս տեր-Ավետիսը բազում մեծ սխրանքներ գործեց, ինչպես Պատմության մեջ է երևում. շատ քաջ էր ու արիասիրտ, և խոսքով հույժ զորավոր, և գործով, և սրա համար, երբ նա հեռանալով հայրենի երկրից պանդխտեց Երուսաղեմում, շատերը նրա հայրենի գավառից հորդորում էին վերադառնալ իրենց մոտ և պաշտպան կանգնել երկրին: Բայց նա հրաժարվում էր՝ քահանայական կարգի պատվին:

Շավնդուր գավառում էին այս զորավարները. Թորոսը, Պայինտուրը, Նուբարը, Վարդանը, Փարսադանը, Թովմասը, Թուրինջը, Հովհաննեսը և նրանց հետ 2000 զորք:

Կալերում էր Պապ զորագլուխը և նրա հետ 700 զորք:

Իսկ Ստեփաննոս Վարդանեսյանը, որ Շահումյան տնից էր, Պապի տեղակալն ու սպարապետը և սիրելի էր Դավթի աչքում՝ իր քաջության ու ազնվականության պատճառով, ուստի և Դավիթը նրան տվեց իշխանություն ու երեք մելիքների կալվածները:

Եվ Մեղրիում էին այս զորավարները. այսինքն, Կոստանդինը, Հովհաննեսը, Սարին, Առաքելը և նրանց հետ 400 զորք: Սրանք դիմագրավեցին տասնութ հազարանոց զորքին Մեղրի բերդավանում և մի գիշեր քչվորով հարձակվեցին տասնութ հազարի վրա ու նրանց զորեղ հարվածներ հասցրին:

Սրանց հետ՝ Մաղաջուղի և Տիլենչի մականվանյալի որդիները 400 հոգով էին:

Սիսական զորավարը 500 հոգով էր:

Մելիք-Ղուջուն՝ 200-ով:

Ավշար Էրեցը, որ կոչվում էր նաև տեր Գաուպար, 250 մարդով:

Պաղաբերդի Ադամ զորավարը 150 մարդով էր:

Կուլբերդի Ղազար զորավարը 110 մարդով էր:

Շիվանիձորի Սարգիս զորավարը՝ 250 մարդով:



ՂՈՒԿԱՍ ՍԵԲԱՍՏԱՑԻ
ԴԱՎԻԹ-ԲԵԿԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

ГУКАС СЕБАСТАЦИ
ИСТОРИЯ ДАВИД-БЕКА

(На армянском языке)
Издательство «Аревик»
Ереван, 1988

Գեղ. խմբագիր՝ **Գ. Բ. Իսահակյան**
Տեխ. խմբագիր՝ **Ա. Վ. Հովհաննիսյան**
Վերստուգող սրբագրիչ՝ **Է. Ա. Սեդրակյան**

ИБ № 116
Հանձնված է շարվածքի 14.01.88 թ.: Ստորագրված է տպագրության 27.04.88 թ.: ՎՖ 01342: Ֆորմատ՝ 84×90¹/16: Թուղթ՝ օֆսեթ: Տառատեսակ՝ «Արարատ»: Տպագրություն՝ օֆսեթ: 4,2 պայմ. տպ. մամ., 17,5 պայմ. ներկ. թերթ, 3,42 հրատ. մամ.: Տպաքանակ՝ 30.000: Պատվեր՝ 470: Գինը՝ 60 կոպ.:
«Արևիկ» հրատարակչություն, Երևան — 9, Տերյան 91:
Издательство «Аревик», Ереван-9, ул. Теряна, 91.

ՀՍՍՀ հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի գործերի պետական կոմիտեի ԳՈՒՆԱՎՈՐ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՏՊԱՐԱՆ, Երևան — 82, Ծովակալ Իսակովի պող. 48:

ТИПОГРАФИЯ ЦВЕТНОЙ ПЕЧАТИ Госкомитета по делам издательств, полиграфии и книжной торговли Арм. ССР, Ереван-82, пр. Адмирала Исакова 48.